ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ - ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վերապատրաստող կազմակերպություն

Պատասխանատու՝ «Երևանի Լեոյի անվան №65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտության թեման՝

ԿԵՂԾ ԵՎ ԻՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐԸ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՄԵԴԻԱ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ:

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու N19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչ՝ Հեղինե Ղևոնդյան

Դասընթացավար՝ **ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ**

Երևան – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տիտղոսաթերթ ---------- 1 - 2

Բովանդակություն ---------- 2 - 3

Ներածություն ---------- 3 - 6

Գլուխ 1.

Մեդիագրագիտություն ---------- 7 - 9

Գլուխ 2.

Փորձարարական մաս ---------- 9 -15

Առաջարկություն ---------- 15 -16

Եզրակացություն ---------- 16 -17

Գրականության ցանկ ---------- 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ով տիրապետում է տեղեկատվությանը, նա տիրում է աշխարհին» :

Սեյմուր Փափերթ

Թեմայի արդիականությունը .

Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայով փոխանցվող հմտությունները, գիտելիքը և ուսումնառության գործողությունները խիստ կարևոր են աշակերտների անձնական և քաղաքացիական կյանքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Այս գիտելիքները և հմտությունները հավասարապես կարևոր են անկախ նրանից, թե ինչ ոլորտում է մասնագիտանալու աշակերտն ապագայում՝ տրանսպորտից մինչև զվարճանքների և արվեստի ոլորտներ, էներգետիկայից մինչև կենսաքիմիական գիտություններ, բիզնեսից և արտադրությունից մինչև առողջապահություն, ֆիզիկա, քիմիա, և բնապահպանական գիտություններից մինչև հետազոտությունների զանազան ոլորտներ: Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր ուժ և խթան, քան տեխնոլոգիաները: 21-րդ դարում տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, սնվելու ձևը, տեղափոխվելու միջոցները, հաղորդակցման ձևը և անգամ մտածելակերպը:



Դրանք կարևորն են ինչպես անձնական այնպես էլ քաղաքացիական կյանքին առնչվող որոշումներ կայացնելիս, հեռախոսների օգտագործումից մինչև ավտոկայանատեղիների դռները և տեխնոլոգիական համակարգերը որոնք առկա են տարբեր համայնքներում:

Ժամանակակից հասարակությունն ընթանում է կրթության արդիականացման ճանապարհով, որն ուղեկցվում է արժեքների վերագնահատմամբ և արժեքների վերաիմաստավորմամբ:

Նշանակալից վերափոխումները ազդել են նաև հանրակրթության և առարկայական պետական չափորոշիչների վրա՝ ուղղված կրթելուն, երկրորդայնացնելով դաստիարակության, արժեկողմնորոշման հիմնախնդիրը:

Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայի գիտելիքային հիմքը, դրանով փաստարկման կարողությունը և դրա ընթացքում ձևավորվող ու զարգացող հմտությունները խիստ անհրաժեշտ են սովորողին 21-րդ դարում արդյունավետ անձնական և քաղաքացիական կյանքով ապրելուն նախապատրաստելու համար:

Հետազոտության նպատակները.

1. Ձևավորել և զարգացնել մադկանց առօրյա գործունեության և մասնագիտական ուղիների վրա ազդող համակարգչային տեխնոլոգիաների վատ և լավ դրսևորումները համեմատելու կարողությունը:

«Կեղծ լուրերը» համարվում է ***նորաբանություն***, այն հաճախ օգտագործվում է մարդկանց մտածողությունը փոխելու համար: **[12]**

Այս հետազոտական աշխատանքը «Կեղծ և իրական լուրերի» մասին է, ինչպես նաև նրանց ճիշտ կիրառման անհրաժեշտությունը ուսուցման բնագավառում:

2. Պատշաճ գնահատել անվտանգության և ապահովության վտանգները, խնդիրներից վերականգնվելու եղանակները, արդյունավետ կերպով պայքարել կիբեր բռնարարության/կռվարարության դեմ:

3. Նկարագրել տեղեկատվությունը հանրայնացնելու և այն գաղտնի ու ապահով պահելու վտանգներն ու առավելությունները: Բացատրել թե ֆիզիկական և թվային ի՞նչ միջոցներով է հնարավոր պաշտպանել էլեկտրոնային տեղեկատվությունը

4. Քննարկել իրական աշխարհում առկա կիբերանվտանգության խնդիրները և այն թե ինչպես է հնարավոր պաշտպանել անձնական տեղեկատվությունը: Ճանաչել տեխնոլոգիայի պատշաճ և ոչ ճիշտ օգտագործման եղանակները կամ դեպքերը այն ժամանակ, երբ կատարում ենք պոստեր սոցիալական մեդիայում, ուղարկում են էլեկտրոնային նամակներ կամ տեքստեր և շրջորոնում ենք ինտերնետը:

5. Հասկանալ սարքերի ապահով և արդյունավետ օգտագործման այն վտանգները (օր.՝ ՍՊԱՄ, Ֆիշինգ, վիրուսներ), որոնք առնչվում են տեխնոլոգիայի օգտագործման տարբեր ձևերին (օր.՝ ծրագրային ապահովումներ ներբեռնելիս և տեղադրելիս/օգտագործելիս, հիպերհղումներ/հղումներ ակտիվացնելիս, ֆայլեր բացում բացելիս):

Ճանաչել կիբեր բռնարարության/կռվարարության տարբեր տեսակները և իմանալ թե ինչպես վարվել դրանց հետ:

Ճանաչել համայնքում առկա այն ռեսուրսները, որոնք կարող են մարդկանց համար ապահովել հասանելիություն տեխնոլոգիային (օր.՝ գրադարաններ, հայորդաց տներ, համայնքային կենտրոններ, կրթական ծրագրեր, դպրոցներ, սարքեր և համակարգչային ծրագրեր նվիրաբերող նախագծեր):

6. Բացատրել գաղտնիությանն առնչվող այն մտահոգությունները, որոնք առկա են տվյալների հավաքագրման և առաջացման գործողություններին և որոնք տեղի են ունենում ավտոմատացված գործընթացների շնորհիվ և հնարավոր է ակնհայտ չլինեն այլ համակարգի օգտատերերին:

Նկարագրել և դրսևորել անվտանք, պատշաճ և պատասխանատու գործելակերպ, առցանց համայնքներում մասնակցություն ունենալիս:

Տալ այնպիսի գիտելիքներ, որով կկարողանան նկարագրել տեղեկատվությունը հանրայնացնելու և այն գաղտնի ու ապահով պահելու վտանգներն ու առավելությունները:

Տրամադրել թվային գրագիտություն, որպեսզի երեխաները տեղեկացված լինեն, իսկ համացանցից օգտվելիս՝ պաշտպանված:

Այս առարկայի միջոցով մենք կպատրաստենք և կոգևորենք առավել մեծ թվով աշակերտների ընտրել ապագայի նորարարական և ստեղծագործական մասնագիտություններ: Բարդ խնդիրներ լուծելու համար արդյունավետ կերպով տեխնոլոգիայի օգտագործումը և դրա ստեղծումը 21-րդ դարում համարվում են գրագիտության նոր և հիմնական հմտություններից մեկը:

Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայի չափորոշիչները արտահայտում են այն առանցքային և կարևոր ուսումնառության վերջնարդյունքները, որոնք անհրաժեշտ են տարրական դպրոցի երկրորդ դասարանից մինչև ավագ դպրոցի տասներկուերորդ դասարանների աշակերտներին՝ կյանքում հաջողությունների հասնելու համար:

Հետազոտության խնդիրները՝

Ներկայացնել միջին տարիքի դպրոցականներին՝ կեղծ և իրական լուրերի ձևավորման հիմնախնդիրները հիմնական դպրոցում՝ 5-րդ դասարանում:

Կարևորել թվային գրագիտության և համակարգչային գիտության դասագրքերի արժեկողմնորոշիչ նշանակությունը դպրոցում:

Հետազոտության մեթոդներն են գիտամանկավարժական գրականության, պարբերական մամուլի ուսումնասիրություն և վերլուծություն, հարցաթերթիկային հարցում և զրույց:

Տարրական և հիմնական դպրոցում որոշիչ է ՀՀ քաղաքացու անձի արժեքային կողմնորոշման, բարոյական դաստիարակության հիմնահարցը, թվային գրագիտություն և համակարգչային գիտության իմացությունն ու պահպանումը, որի համար հատկանշական է թվային գրագիտության և համակարգչային գիտության դասագրքերի արժեկողմնորոշիչ ուղղվածությունը:

Մեդիագրագիտություն

Այն հմտությունների ամբողջությունը, որը մարդկանց թույլ է տալիս ձեռք բերել, քննադատաբար գնահատել և ստեղծել մեդիա (վերաբերում է զանգվածային լրատվամիջոցների ու հաղորդակցման տարբեր ձևերին, այդ թվում՝ մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, գովազդ, կինեմատոգրաֆիա, համացանց իր բոլոր հավելումներով): : [8]

Մեդիագրագիտությունը չի սահմանափակվում միայն կրողով: ԱՄՆ-ի Մեդիագրագիտության ուսուցման ազգային ասոցիացիան այն սահմանում է որպես ունակություն՝ ձեռք բերելու, վերլուծելու, գնահատելու, ստեղծելու և գործելու՝ օգտագործելով հաղորդակցման բոլոր ձևերը: Ըստ Մարշալ Մաքլյուենի՝ հաղորդակցման միջոցները ինքնին պետք է դիտարկվեն որպես մարդու, մշակույթի ու հասարկության ձևավորման միջոց:

Մեդիագագիտության ուսուցումը նպատակ ունի բարձրացնել զանգվածային լրատվամիջոցների ազդեցության մասին տեղակացվածությունը և ձևավորել ակտիվ դիրքորոշում ինչպես մեդիայի օգտագործման, այնպես էլ նրա ստեղծման նկատմամբ:

Մեդիագրագիտության ուսուցումն ուսումնական ծրագրի մաս է կազմում Միացյալ Նահանգներում և Եվրամիության մի շարք երկրներում, իսկ մեդիագրագիտության ոլորտի մասնագետների ու մանկավարժների միջգիտակարգային համաշխարհային միությունը մասնակցում է գիտելիքների փոխանակմանը գիտական ու մասնագիտական ամսագրերի և ազգային ասոցիացիաներին անդամակցման միջոցով:

Մեդիագրագիտության ուսուցում

Մեդիագրագիտության ուսուցման ժամանակ հաճախ օգտագործվում է մանկավարժական մոդել՝ հիմնված հարցման վրա, որը մարդկանց խրախուսում է հարցեր տալ այն մասին, ինչ իրենք տեսնում են, լսում և կարդում: Մեդիագրագիտության ուսուցումը մարդկանց սովորեցնում է գործիքներ, որոնք նրան օգնում են քննադատաբար վերլուծել հաղորդագրությունները, սովորողներին հնարավորություն է տալիս ընդլայնել սեփական մեդիա հաղորդագրություններն ստեղծելու իրենց փորձը: **[8]**

Քննադատական վերլուծությունը կարող է ներառել հեղինակի, նրա նպատակի ու տեսակետի որոշումը, կառուցման մեթոդների ու ժանրերի ուսումնասիրությունը, ԶԼՄ պատկերացումների մոդելների ուսումնասիրումը, ինչպես նաև լուրերի ու հասարակական գործերի ներկայացման մեջ պրոպագանդայի, ցենզուրայի ու կանխակարծության առկայության (ինչպես նաև դրանց պատճառների) հայտնաբերումը:

Մեդիագրագիտության ուսուցումը կարող է սովորեցնել, թե ինչպես են կառուցվածքային առանձնահատկությունները (ինչպիսիք են ԶԼՄ սեփականատերերի ով լինելը կամ նրա ֆինանսավորման մոդելը) ազդում տեղեկատվության տարածման վրա:

Ինչպես նշվում է Մեդիագրագիտության ուսուցման հիմնական սկզբունքներում, «մեդիագրագիտության ուսուցման նպատակն է բոլոր տարիքների մարդկանց օգնել զարգացնելու ինքնարտահայտման ուսումնասիրման ունակություններն ու ինքնարտահայտման հմտությունները, որոնք անհրաժեշտ են ժամանակակից աշխարհում քննադատաբար մտածող, արդյունավետ հաղորդակցվող և ակտիվ քաղաքացի լինելու համար» :

Փորձարարական մաս

Քանի որ առարկան նոր է և սկսվում է 5-րդ դասարանում, ուստի նպատակահարմար էր հետազոտություն կատարել 5 -րդ դասարանի սովորողների մոտ՝ կիրառելով մտագրոհ մեթոդը:

Հետաքրքիր էր պարզել սովորողների գիտելիքների կեղծ և իրական լուրերի շրջանակներում (Ձնագնդի մեթոդ): Որից ելնելով տրվեց տեղեկատվություն հավաստի և կեղծ լուրերից գրագետ օգտվելու ինֆորմացիայի աղբյուրներ:

Կատարվեց աշխատանք զույգերով, որի ընթզցքում ներկայացվեց հավաստի և կեղծ լուրերի ճիշտ աղբյուրներից օգտվելու պարզագույն կանոններին:

Կեղծ և իրական լուրերից օգտվելու թեման հեշտ է պատկերացնել ինֆորմատիկայի ոլորտում, խոսքի ազատության իրավունքն ու մեդիայի դերը ժողովրդավարական հասարակության մեջ: Բայց հաճախ դժվար է պատկերացնել մեդիագրագիտությունը և ինֆորմատիկան հասարակությունից հեռու:

Ծրագրային թեմաները կապելով օրվա կարևոր իրադարձությունների հետ, ուսուցիչը դրանք ավելի հետաքրքիր է դարձնում աշակերտի ընկալման համար, դասերի մեջ տեսնելով այսօրվա մարտահրավերները՝ սովորողը կարող է փորձել ինքնուրույն և ստեղծարարությամբ կողմնորոշվել ու լուծումներ փնտրել:

Նկատի ունենալով, որ, հատկապես, ինքնամեկուսացման շրջանում աշակերտներն ավելի շատ են օգտագործում մեդիան, ուսուցիչը խրախուսում է նախագծային առաջադրանքները՝ ներառելով տեսաձայնային, ինտերակտիվ, կամ այլ մեդիա գործիքներ:

Աշակերտները սովորում են ավելի գրագետ օգտվել այդ գործիքներից, տեղեկատվական աղբյուրներից, հարթակներից, սովորում են տարբերել ու ստուգել կասկածելի և վստահելի աղբյուրները:

Աշակերտները սկսում են քննադատորեն վերլուծել մեդիայի տարածած տեղեկությունները, դրանց ազդեցությունը աշխարհի ու իրենց կյանքի վրա, քննարկում ու վերլուծում են լրատվամիջոցների և տեղեկատվության դերը արտակարգ իրավիճակներում: **[4]**

Կեղծ և իրական լուրերի թեման հեշտ է պատկերացնել ինֆորմատիկայի ոլորտում, խոսքի ազատության իրավունքն ու մեդիայի դերը ժողովրդավարական հասարակության մեջ:

Դրանք օրինակներ են, որոնցով չի սահմանափակվում թեմայի և/կամ մեդիագրագիտության ինտեգրումը դպրոցում:

Կազմվեց թեստեր՝ նկարներով, մատուցվեց աշակերտներին kahoot, quizizz գործիքների միջոցով:

Ժամանակակից աշխարհը անհնար է պատկերացնել առանց ինտերնետի: Նրանք, ովքեր հստակ պատկերացնում են, ինչ է ինտերնետը պետք պատկերացում կազմեն նաև բրաուզերների մասին

Մարդը ոչ միայն ստանում է տեղեկություն, այլ նաև պահպանում է այն, փոփոխում, փոխանցում ուրիշներին:

Տեղեկատվության բնագավառում շատ է տարածված «Կեղծ լուր» հասկացությունը: «Կեղծ լուրեր» -ը ապակողմնորոշիչ տեղեկություններ են, որոնք ներկայացված են որպես իրական լուրեր:

Կեղծ լուրերը լուրջ սպառնալիք են ներկայացնում ամբողջ աշխարհում: «Կեղծ տեղեկատվություն» կամ «Կեղծ լուր» եզրույթն առաջացել է դեռևս 1439թ.-ին գերմանացի գիտնական Յոհան Գուտենբերգի տպագրության գյուտի ժամանակաշրջանից:

16-րդ դարում տարածված է եղել false news արտահայտությունը, որը վերաբերել է թերթերում հրապարակված կեղծ լուրերին: **[4]**

19-րդ դարի վերջերից սկսել է լայնորեն կիրառել fake news հասկացությունը:

Հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ՝ փոխվել են կեղծ լուրերի ստեղծման և տարածման ձևերը:

Կեղծ լուրերը տարածվում են կեղծ հարթակների միջոցով, որոնք հաճախ կրկնօրինակում են իրական լրատվական աղբյուրների տեսքը:

Կեղծ լուրերում օգտագործվում են նաև կեղծ տեսանյութեր, նկարներ, գծապատկերներ, որոնք ստեղծվում են թվային ծրագրերի միջոցով:

Արդյունքները կարող են լինել շատ համոզիչ՝ թույլ չտալով դրանք ճանաչել որպես կեղծ:

Հետազոտությունները ցույց ենք տվել, որ կեղծ տեղեկատվությունն ավելի արագ է տարածվում, քան իրական լուրերը:

Կեղծ լուրերը հաճախ պարունակում են տարօրինակ հայտարարություններ և առաջացնում են սուր զգացողություններ՝ զայրույթ կամ վախ:

Այնուամենայնիվ, այդքան էլ հեշտ չէ որոշել, թե որ նորություններն են վստահելի, որոնք՝ ոչ: Կեղծ լուրերին հավատում ենք ոչ թե այն պատճառով, որ խելք չունենք, այլ պարզապես սովոր չենք մտորելու, հավատալու կամ չհավատալու որոշում ընդունելուց առաջ:

Թե ինչու է այդպես, լավ բացատրում է հոգեբանությունը:

Ֆեյք լուրերին հավատում ենք, քանի որ դրանք ավելի պարզ ու ճշմարտացի են թվում՝ առաջին հայացքից: Կարող են թվալ կասկածելի երկրորդ հայացքից, բայց հաճախ երկրորդ հայացքի ժամանակ չունենք:

ԹԵՄԱՅԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ՝

Կեղծ և իրական լուրերի դերը հասարակությունում **[9]**

Բացատրել հաքերության դրական և վատ նպատակները:

Կեղծ լուրերի տարածումը (1894 թվական, Ֆրեդերիկ Բար Օփեր) **[11]**

Կեղծ լուրը դեղին լրագրության կամ քարոզչության մի տեսակ է, որը բաղկացած է կանխամտածված ապատեղեկատվությունից կամ կեղծիքներից, որոնք տարածվում են տպագիր և հեռարձակվող կամ առցանց սոցիալական լրատվամիջոցների միջոցով: Սխալ նորություններ գրվում և հրատարակվում են մարդկանց մոլորության մեջ գցելու նպատակով, ինչպես նաև գործակալության կամ անձին վնաս պատճառելու համար: Սովորաբար ապակողմնորոշող և խաբուսիկ կեղծ տեղեկատվությունը տարբերվում է ակնհայտ երգիծանքից, որը նախատեսված է լսարանին ծիծաղեցնելու համար՝ այլ ոչ թե մոլորեցնելու:

Օրինակ՝ Ֆեյսբուք սոցիալական կայքը, օգտագործելով ալգորիթմական ռազմավարություն գրավում է իր լսարանին կեղծ լուրերով: Հաճախ այս նորությունները լինում են բավականին աչքի ընկնող թեմաների վերաբերյալ: Կեղծ լուրերը տարածվում են հիմնականում անձնական շահերն ապահովվելու համար և խթանում են լուրջ լրատվամիջոցների աշխատանքը [1][2][3]:

Առցանց գովազդի եկամուտների հասանելիությունը, քաղաքական բևեռացման ավելացումը և սոցիալական լրատվամիջոցներում՝ առաջին հերթին Ֆեյսբուքում, արագ և ազատ լուրերի տարածումը նպաստում է այս հիմնահարցի վատացմանը[4]: Դաշնության կառավարական դերակատարները նույնպես նպաստում են կեղծ լուրերի ստեղծմանը և տարածմանը՝ հատկապես ընտրությունների ժամանակ:

Այնպիսի նորություններ, ինչպիսիք հայտնվում են սոցիալական լրատվամիջոցներում կամ կեղծ լրատվական կայքերում, իրականում հիմք չունեն, բայց ներկայացվում են որպես փաստացի ճշգրիտ: «CBS վաթսուն րոպե»- ի պրոդյուսեր՝ Մայքլ Ռադուցկին ասում է, որ իր շոուն հիմնված է կեղծ լուրերի վրա՝ «Պատմություններ, որոնք ապացուցելիորեն կեղծ են, հսկայական ձգողականություն ունեն մշակույթում և տարածվում են միլիոնավոր մարդկանց կողմից» : Սակայն շոուն չի ընդգրկում այնպիսի կեղծ լուրեր, որոնք վերաբերում են քաղաքականությանը: Գայ Քեմփյեյնը, ով շոուի պրոդյուսերներից մեկն է, ասել է. «Այն, ինչի մասին մենք խոսում ենք, շինծու պատմություններ են, և ինչպես էլ այն սահմանենք, միևնույն է, այն մնալու է սուտ»: Որոշ դեպքերում, ըստ երևույթին, կեղծ տեղեկությունները կարող են լրատվամիջոցների գումարի աղբյուր հանդիսանալ:

FAKE NEWS

Կեղծ լուրի օրինակ է նաև 1835 թ. Լուսնային մեծ խաբեությունը: Նյու Յորքի «The Sun» թերթը հոդվածաշար հրապարակեց այդ ժամանակ հայտնի աստղագետի մասին, որը, ըստ հոդվածաշարի հեղինակի, իր ստեղծած գերաստղադիտակով իբր դիտել էր Լուսնի վրա տարօրինակ արարածներով բնակեցված տարածք: Աղմկահարույց հոդվածների արդյունքում հետաքրքրասեր բաժանորդների նոր բանակ ավելացավ, սակայն մեկ ամիս անց հրապարակվեց, որ լուրը կեղծ էր:

Կեղծ լուրերը՝ պատմության քառուղիներում Մ.թ.ա. 13–րդ դարում Ռամզես Մեծը ստահոդ լուրեր տարածեց՝ Քադեշի ճակատամարտը ներկայացնելով որպես եգիպտացիների համար ցնցող հաղթանակ. նա իր գրեթե բոլոր տաճարների պատերին պատկերել է ճակատամարտի ժամանակ թշնամուն հարվածներ հասցնելու տեսարաններ: Եգիպտացիների և խեթերի միջև կնքված պայմանագիրը, սակայն, ցույց է տալիս, որ ճակատամարտն իրականում փակուղի էր:

Կորոնավիրուսի մասին ֆեյք նորություններին հավատում են շատերը, անգամ խելացիներն ու ամեն ինչ ստուգողները: Խնդիրն այն է, որ կորոնավիրուսի մասին ֆեյք լուրերը (վարակի բռնկման պատճառներից սկսած, պայքարի ձևերով վերջացրած) թվում են ավելի ընկալելի ու, մեծ հաշվով, նաև վստահելի:

2020-ի մարտին The Economist-ն ու YouGov-ը անցկացրին հարցում, որը ցույց տվեց, որ ամերիկացիների 13%-ը կորոնավիրուսը համարում է խաբեություն, իսկ 49%-ը հավատում է, որ համավարակը արհեստականորեն է ստեղծվել ու տարածվել մարդկանց կողմից:

Այսինքն՝ հարցվածների գրեթե կեսը հավատում է, որ համավարակի ակունքներում դավադրություն է, ընդ որում՝ դիտավորյալ վարակելու վարկածին հավատում են նաև որոշ գիտնականներ ու կրթված այլ մարդիկ:

BBC Future-ը դա բացատրում է տեղեկատվական գերհագեցվածությամբ: Հատկապես համավարակի ամիսներին մարդիկ բախվում են ահռելի ծավալի տեղեկատվության հետ՝ լուրեր, տարաբնույթ վերլուծություններ, կարծիքներ, նորից լուրեր, թվեր, նորից կարծիքներ… **[5]**

Եվ այդ անդադար ստեղծվող լրատվական հոսքագծում ամենաարժանահավատը դառնում են (որքան էլ տարօրինակ հնչի) ֆեյք լուրերը: Ինչու՞: Որովհետև դրանք ստեղծողներն ու տարածողները այնպես են կառուցում կեղծ տեղեկությունը, որ մարդիկ հակված լինեն հավատալու: Իսկ ստուգված ու ճշմարիտ լուր կառուցողները այդ մասին չեն մտահոգվում:

Մի քիչ շեղվենք ու գնանք դեպի անցյալ, երբ զանգվածային լրատավական միջոցները համարվում էին ճշմարտություն փոխանցողներ: Ավելի ճիշտ՝ ճշմարտություն էր համարվում այն տեղեկությունը, որը հաղորդում էին դասական զանգվածային լրատվամիջոցները: Դա համագումար տեղեկատվություն էր՝ կառուցված էթիկայի վրա, որը դառնում էր հանրային ճշմարտություն:

Տարբեր ճգնաժամերը (այդ թվում՝ տեխնոլոգիական պրոգրեսը, որը նույնպես ճգնաժամ էր մեդիայի համար) ստիպեց ընդունել, որ լուրեր արտադրող մեքենան կարող է չլինել ճշմարտություն փոխանցող:

Ճշմարտությունն ընդհանրապես հանվեց օրակարգից: Դարձավ այսպես՝ կարծիք կա, մարդիկ խոսում են, կա տեղեկություն և այլն: Հետճշամրտությունը այդպես է աշխատում:

Ստացվեց, որ լուրեր արտադրելն ու տարածելը արդեն կախված է այն բանից, թե ով է դա անում և ինչ նպատակով:

Ինֆորմացիայի խեղաթյուրումը ունի երկու շերտ՝ գիտակցված խաբեություն (ապատեղակատվություն) և թյուրգիտակցված խաբեություն (առանց կարծելու, որ խաբում են):

Երկու դեպքում էլ գործ ունենք սխալ համատեքստի ստեղծման հետ, որն ազդում է ինֆորմացիայի ընտրողական ընկալման վրա: Եվ ֆեյք կառուցողները դա լավ գիտակցում են՝ օգտագործելով տարբեր հնարքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, 5-րդ դասարաններում կատարած հետազոտական և փորձարարական աշխատանքները ցույց են տվել, որ հնարավոր է թվային գրագիտություն և համակարգչային գիտության դասերին աշակերտները կիրառեն թվային գործիքներ, տեղեկատվությունը օրինական, ապահով և էթիկապես ճիշտ կերպով հավաքագրելու, գնահատելու և օգտագործելու կարողունակություն:

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կարողացավ գնահատել թվային աղբյուրների ճշգրտությունը, տեղին և հարմար լինելը: [5]

Արդի աշխարհագրական կրթական գործընթացը չի կարող բավարարվել միայն երևույթի մասին ներկայացված տեղեկությունների պարզ մտապահմամբ, անհրաժեշտ են նաև պատճառահետևանքային կապերի առանձնահատկությունների վերլուծման

ընդունակության զարգացումը: Այսօր արդեն կարելի է ասել, որ ՏՀՏ-ի օգնությամբ իրականացվող դասագործընթացները սովորողների մոտ ձևավորում են վերլուծման, համակարգման, ընդհանրացման ու դասակարգման ունակություններ, նպաստելով նրանց դատողությունների և եզրահանգումների հիմնավորմանը:

Այսպիսով, ապրելով գիտատեխնիկական, ինֆորմացիոն և նորանոր հայտնագործությունների 21-րդ դարում, երբ համացանցը իր վատ և լավ հատկություններով ու կիրառմամբ դարձել է մեր կյանքի անբաժան մասնիկը, մենք պետք է դաստիարակենք և կրթենք այնպիսի սերունդ, որը կարողանա դիմակայել

ժամանակի հրամայականներին: Ինչպես նաև, աշակերտը գիտակցելով համացանցի կարևոր նշանակությունն ու ուժը կկարողանա ճիշտ կողմնորոշվել ու այն ճիշտ կիրառել ի օգուտ մարդկությանն և մեր հայրենիքի շահերին:

ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆ

1. Ստուգել տվյալ նյութի աղբյուրը: Որպես կանոն կեղծ լուրերի կայքերի հասցեները պարունակում են ուղղագրական սխալներ:
2. Գտնել տվյալ նյութի հեղինակին: Տեղեկություններ գտնել տվյալ նյութը հրապարակող հեղինակի մասին՝ հասկանալու համար՝ արդյոք նա վստահելի՞ է:
3. Ստուգել՝ արդյոք տվյալ նյութը այլ աղբյուրներ և՞ս լուսաբանում են: Ճշտել՝ հատկապես հեղինակավոր լրատվական աղբյուրները լուսաբանո՞ւմ են տվյալ նյութը:
4. Ընտրված տեղեկատվությանը վերաբերվել քննադատորեն: Շատ կեղծ լուրեր միտված են հուզական ուժեղ ապրումներ առաջացնելու, օրինակ՝ վախ կամ զայրույթ:
5. Ստուգել ընտրված տեղեկատվության մեջ ներկայացված փաստերի իսկությունը: Վստահելի նորությունները ներառում են բազմաթիվ փաստեր՝ տվյալներ, վիճակագրություն, փորձագետների մեջբերումներ և այլն:
6. Ստուգել մեկնաբանությունները: Նույնիսկ իրական հոդվածը կամ տեսանյութը կարող է մեկնաբանություններ չունենալ. հաճախ հոդվածի հղումներն ու մեկնաբանությունները կարող են ավտոմատ կերպով ստեղծվել:
7. Համեմատել տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունները: Մենք բոլորս ունենք համոզմունքներ: Որքան շատ տեղեկություններ ստանանք տարբեր աղբյուրներից և դիտարկենք տարբեր տեսակետներ, այնքան մեծ կլինի հավանականությունը, որ կկարողանանք ճիշտ եզրակացություններ անել:
8. Ստուգել՝ միգուցե հոդվածը կատա՞կ է: Երգիծական լուրերի կայքերը շատ տարածված են, բայց միշտ չէ, որ պարզ է՝ լուրը կատա՞կ է, թե՞ իրական: Ուստի՝ պետք է այցելել տվյալ հարթակ և ստուգել՝ արդյոք երգիծական և զվարճալի պատմությունները բնորոշ են տվյալ հարթակին:
9. Ստուգել օգտագործված պատկերների իսկությունը: Մերօրյա որոնողական համակարգերը թույլ են տալիս որոնում կատարել լուսանկարների միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ↑ Hunt Elle (դեկտեմբերի 17, 2016): «What is fake news? How to spot it and what you can do to stop it»: *The Guardian*: Հասանելի է հունվարի 15, 2017
2. ↑ Schlesinger, Robert (April 14, 2017). "Fake News in Reality". *U.S. News & World Report*.
3. ↑ "The Real Story of 'Fake News': The term seems to have emerged around the end of the 19th century". Merriam-Webster. Retrieved October 13, 2017.
4. ↑ Woolf Nicky (նոյեմբերի 11, 2016): «How to solve Facebook's fake news problem: experts pitch their ideas»: *The Guardian*: Հասանելի է հունվարի 15, 2017
5. https://escs.am/files/files/2022-12-08/6c567e67a8f3d1c0ed3869a890aa9708.pdf
6. ↑ «Fake news busters»: *POLITICO* (en-US): 2017-09-14: Հասանելի է 2017-09-15
7. ↑ «This Is Not Fake News (but Don't Go by the Headline)»: *Նյու Յորք Թայմս*: ապրիլի 3, 2017: «Fake news – a neologism to describe stories that are just not true, like Pizzagate, and a term now co-opted to characterize unfavorable news – has given new urgency to the teaching of media literacy»
8. https://media.am/hy/critique/2020/05/11/21342/
9. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A5%D5%A4%D5%AB%D5%A1%D5%A3%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
10. https://escs.am/files/files/2020-07-17/3f33868654e7ca429c6f11334d7e4472.pdf
11. Մինասյան Մ., Մինասյան Ա., Հարությունյան Ա., Համացանցի օգտագործման ուղեցույց, Երևան 2009թ., էջ 127
12. *https://escs.am/files/files/2022-12-08/6c567e67a8f3d1c0ed3869a890aa9708.pdf*